



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Ս. ՆԱՅԱՆՎԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ ԷՆՍԻՆՈՅԻ
Ս. ՆԱՅԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, Հոկտեմբեր 12-ին, Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Ս. Պատարագին պիտի հանդիսապետէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, եւ պիտի փոխանցէ օրուան պատգամը:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT
HOLY MARTYRS CHURCH**

On Sunday, October 12th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at Holy Martyrs Church in Encino. The Prelate will also deliver the sermon.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ
ՀԱՅ ԴԱՏԻ ՏԱՐԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԻՆ**

Կիրակի, Հոկտեմբեր 12ի երեկոյեան, տեղի պիտի ունենայ Կեդրոնական Հայ Դատի տարեկան ձեռնարկը, Ronald Reagan գրադարանին մէջ, Սիմի Վելի:

Պիտի պատուըուին նախկին նախագահ Ռոնըլտ Ռեյքըն (յետ մահու), փոխ նախագահութեան դեմոկրատ թեկնածու Ճօ Պայտըն, Լոս Անճելըսի քաղաքապետ Անթոնիօ Կիերակոսսա եւ Ազգ. բարերար Տիկին Աշխէն Փիլաւճեան:

Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւնները:

PRELATE TO DELIVER INVOCATION AT ANC BANQUET

The annual banquet of the Armenian National Committee Western Region will take place on Sunday, October 12th, at the Ronald Reagan Library in Simi Valley. This year's honorees include the late President Ronald Reagan (posthumously), Vice-Presidential candidate Senator Joe Biden, Los Angeles Mayor Antonio Villaraigosa, and national benefactor Mrs. Ashkhen Plavjian.

The Prelate will attend the banquet and deliver the invocation.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՄԸ Կ'ԱՌԱՔԷ ՊԸՐՊԷՆՔԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԴԱՇՏԱՅԱԼԴԵՍԻՆ

Կիրակի, Յոկտեմբեր 12-ի կ.ա. ժամը 11-ին, Պըրրպէնքի Հայ Մշակութային Միութեան կազմակերպութեամբ դաշտահանդէս մը տեղի պիտի ունենայ Պըրրպէնքի Robert Gross Park-ին մէջ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Արժ. Տ. Կոմիտաս Քհնյ. Թորոսեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին:

BURBANK COMMUNITY FESTIVAL

The Burbank Armenian Center has organized a community festival which will take place on Sunday, October 12th, starting at 11:00 a.m. at Robert Gross Park in Burbank.

Rev. Fr. Gomidas Torossian will attend on behalf of the Prelate.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ Ի ՊԱՏԻ ԼԻԼԻԹ ԳԱԼՍԵԱՆԻ ՀԱՄԱՉԳԱՅԻՆԻ ՁԵՌՆԱՐԿԻՆ

Երկուշաբթի, 13 Յոկտեմբերին, Համազգայինի Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, հիւրընկալութիւն-հանդիպում մը տեղի պիտի ունենայ Ազգային Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, ի պատիւ հիւրաբար շրջանս այցելող Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի պատգամաւոր եւ Համազգայինի Հիմնադրամի նախագահ Դոկտ. Լիլիթ Գալստեանի:

Դոկտ. Գալստեան պիտի անդրադառնայ հայրենիքի մէջ Համազգայինի վերջին 17 տարիներու գործունէութեան եւ Հայաստանի մշակութային կեանքին՝ ընդհանրապէս:

Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին:

PRELATE TO ATTEND HAMAZKAYIN RECEPTION IN HONOR OF DR. LILIT GALSTYAN

On Monday, October 13th, a reception in honor of Armenian Parliament member and president of the Hamazkayin Foundation in Armenia Dr. Lilit Galstyan will take place at the Prelacy “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall.

During the reception organized by the Regional Executive of Hamazkayin, Dr. Galstyan will speak on the work of the Hamazkayin Foundation over the last 17 years and of cultural life in Armenia in general.

The Prelate will attend the reception.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ՎԵՐԱՄՈՒՄԻՏԻ ԱՌԻԹՈՎ Կ'ԱՅՑԵԼԷ ԱՉԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

Դպրոցական վերամուտին առիթով, եւ համաձայն մեր Թեմի աւանդութեանց, Առաջնորդ Սրբազանը անցնող շաբթուան ընթացքին ձեռնարկեց Ազգային վարժարաններ այցելութիւններուն, 2008-2009 տարեշրջանին համար իր օրհնութիւնն ու բարեմաղթութիւնները փոխանցելով տնօրէններուն, դաստիարակներուն ու աշակերտներուն:

Հինգշաբթի, 9 Յոկտեմբերի առաւօտուն, Առաջնորդ Սրբազանը այցելեց Կլենտէյլի Ռիչըրտ Թիւֆէնքեան Ազգային Մանկամտօր Մանկապարտէզը:

Սրբազանին կ'ընկերանային Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Աթմաճեան եւ Արժ. Տ. Կոմիտաս Քհնյ. Թորոսեան, ինչպէս նաեւ Խնամակալ Մարմինի անդամ Օր. Շարլոթ Սասունեան:

Առաջնորդ Սրբազանն ու հիւրերը ընդունուեցան վարժարանի տնօրէնուհի Տիկին Արսինէ Աղազարեանի եւ վարժարանի պատասխանատուներուն կողմէ: Դպրոցի շրջափակին մէջ տեղի ունեցաւ աշակերտական յայտագիր: Խօսք առնելով, Առաջնորդ Սրբազանը բացատրեց աստուածաշնչական առակներէն Բարի Յովիւին օրհնակը:

Ուրբաթ, 10 Յոկտեմբերին կէսօրէ ետք, Առաջնորդ Սրբազանը այցելեց Կլենտէյլի Վահան եւ Անոյշ Շամլեան Ազգային վարժարանը, ընկերակցութեամբ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներ՝ Արժ. Տ. Կոմիտաս Քհնյ. Թորոսեանի ու Տ. Վազգէն Քհնյ. Աթմաճեանի, եւ Խնամակալ Մարմինի անդամ Դոկտ. Վարդգէս Թովմասեանի:

Վարժարանի մուտքին Առաջնորդ Սրբազանն ու հիւրերը դիմաւորուեցան վարժարանի տնօրէն Տիար Վազգէն Մատենլեանի, փոխտնօրէնուհի Տիկին Ռիթա Գաբրիէլեանի ու վարժարանի պատասխանատուներուն կողմէ:

Առաջնորդ Սրբազանը առիթ ունեցաւ այցելելու դասարանները. աշակերտները բարի գալուստի երգերով ու արտասանութիւններով դիմաւորեցին Սրբազանը եւ հիւրերը:

Առաջնորդ Սրբազանը այցելութիւնները պիտի շարունակէ յառաջիկայ օրերուն:

PRELATE'S VISIT TO PRELACY SCHOOLS

Over the past week the Prelate has been paying visits to Prelacy Schools and meeting with principals, teachers, and students to convey his blessings and well wishes for the 2008-2009 academic year.

On the morning of Thursday, October 9th, the Prelate visited Richard Tufenkian Pre-School in Glendale. He was accompanied by St. Mary's pastors Rev. Fathers Vazken Atmajian and Gomidas Torossian, as well as Board of Regents member Ms. Charlotte Sassounian. Upon their arrival the Prelate and delegation were greeted by director Mrs. Arsine Aghazarian and school administrators. Following a presentation by the students, the Prelate offered his remarks in which he explained to the students the parable of the Good Shephard.

On the afternoon of Friday, October 10th, the Prelate visited Vahan and Anoush Chamlian Schools, accompanied by St. Mary's pastors Rev. Fathers Vazken Atmajian and Gomidas Torossian, and Board of Regents member Dr. Vartkes Tomassian. The Prelate was welcomed by Principal Mr. Vazken Madenlian and Vice-Principal Mrs. Rita Kaprielian, and administrators. During his visits to the classrooms, the Prelate was welcomed by the students with songs and recitations.

The Prelate's visits will continue in the coming week.

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՍԲԷԹԻ ՈՒ ՉԱՆԳԱԿԱՏՈՒՆԵՐՈՒ ԽԱԶԵՐՈՒՆ ՕԾՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Կիրակի, 5 Յոկտեմբերին, Եպիսկոպոսական Ս. Պատարագ մատուցուեցաւ Փասատիւնայի Ս. Սարգիս Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ մէջ: Պատարագեց ու քարոզեց Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան:

Սուրբ Խորանին սպասարկեցին Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի զոյգ վարիչները՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան, Հոգ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիւմեան եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Խորէն Քիւն. Պապօշեան:

Ներկայ էին եկեղեցւոյ բարերարները՝ Տէր եւ Տիկին Սարգիս եւ Սիւզան Կիոցիսեան ամուլը, ինչպէս սատէ Տէր եւ Տիկին Սարգիս եւ Նունէ ՍԵՎԵՐՃԵԱՆՆԵՐՆ ու Տէր եւ Տիկին Կարօ եւ Մարալ Ղազարեանները՝ որոնք զանգակատուներու խաչերու օծման կնքահայրութիւնը ստանձնած էին,

Ազգային Կեդրոնական Վարչութեան ու Թեմիս Ազգ. Վարչութեան անդամներ, եկեղեցւոյ հոգաբարձութեան անդամներ, երեսփոխաններ, շրջանի միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչներ եւ հաւատացեալներ: Յաւարտ Ս. Պատարագի, տեղի ունեցաւ մայր գմբէթի եւ զոյգ զանգակատուներու խաչերու օծումն ու զետեղումը:



Ս. Պատարագի աւարտին, կազմակերպութեամբ եկեղեցւոյ Տիկնանց Միութեան, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 6-ին, ի նպաստ եկեղեցւոյ պայծառութեան, ճաշկերոյթ մը կազմակերպուած էր Փասատիսայի Հայ Կեդրոնին մէջ. ձեռնարկը կը վայելէր Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը: Ներկայ էին Առաջնորդ Սրբազանն ու Ազգային Վարչութեան

ներկայացուցիչներ:

PRELATE CONSECRATES DOME AND BELL TOWER CROSSES AT ST. SARKIS CHURCH

On Sunday, October 5th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and delivered the sermon at St. Sarkis Church in Pasadena. At the conclusion of Divine Liturgy, the Prelate conducted the consecration and placement of the dome and bell tower Crosses. The Prelate was assisted at the altar by Christian Education Department Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, and parish priest Rev. Fr. Khoren Babochian.



The Prelate began his sermon by thanking God for the historic day, then congratulated and commended the Pastor, Board of Trustees, Delegates, Ladies Auxiliary, and building committee members for their diligence throughout the construction phase and their commitment to seeing the project through. The Prelate addressed the faithful saying though the physical construction of the church is complete, that it is

imperative that they maintain and strengthen their ties with the church and have a more active involvement in the endeavors of their parish community. He

concluded by praying to God for His “holy and venerable cross to deliver us all from enemies both visible and invisible”.

At the conclusion of services the Prelate was led in a procession to the main entrance where the crosses were laid out. The Reverend Fathers applied wine and water to the crosses, after which the Prelate began the consecration with Holy Muron. Hundreds of faithful including main church sponsors Mr. and Mrs. Sarkis and Suzan Kitsinian, and bell tower sponsors Mr. and Mrs. Sarkis and Nouné Sepetjian and Mr. and Mrs. Garo and Maral Ghazarian. Following the consecration, the crosses were ceremoniously placed atop the dome and bell tower. At the conclusion of the service, the faithful were invited for a reception organized by the Ladies Auxiliary.

Later in the evening, over 350 guests attended the annual banquet of the church at the Pasadena Armenian Center to celebrate this latest accomplishment of the parish. During the banquet, the Pastor and Board of Trustees commended the members of the building committee by presenting them with mementos. Remarks were offered by Board of Trustees and an artistic program also took place. The banquet came to a close with the Prelate’s remarks and benediction.

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱԻՔ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ

Շաբաթ Յոկոտեմբեր 4-ի յետմիջօրէին, Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, կազմակերպութեամբ Թեմիս Երիտասարդաց Գործադիր Մարմնի Յանձնախումբին եւ Նախագահութեամբ Թեմիս Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, Երիտասարդաց հաւաք մը կազմակերպուած էր, ներկայացնելու 13-20 Օգոստոսին, Կաթողիկոսարանի Դպրեվանքին յարկին տակ, Պիքֆայա, տեղի ունեցած միջ-թեմական Երիտասարդական համագումարէն բխած առաջարկները, զորս ներկայացուցին մեր Թեմին կողմէ մասնակցող պատուիրակութենէն ութ Երիտասարդ-Երիտասարդուհիներ, գլխաւորութեամբ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեանի:

Հաւաքին սկիզբը բարի գալստեան խօսք արտասանեց Երիտասարդաց Յանձնախումբի ատենապետ՝ Ռաֆֆի Նալճեան, իսկ բացման խօսքը կատարեց անդամներէն՝ Լիզա Սարգիս, որ յանուն մասնակից Երիտասարդներուն փառք տուաւ Աստուծոյ, ապա շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազանին իր ստեղծած դիրութեանց համար, ապա հակիրճ կերպով ներկայացուց Համագումարէն քաղած իրենց դասերը:

Համագումարին մասնակցող պատուիրակները այս հանդիպումին համար յատկապէս պատրաստած էին կէս ժամ տեւողութեամբ վիտեո-երիզ մը, ներկայացնելով համագումարին աշխատանքները, ինչպէս նաեւ Վեհափառ Հայրապետին պատգամը՝ ուղղուած Երիտասարդներուն: Ապա

անոնք զեկուցեցին համագումարին իրենց ձեռք բերած փորձառութեանց մասին ու պատասխանեցին ներկայ երիտասարդներու հարցումներուն:



Փակման խօսքը կատարեց Առաջնորդ Սրբազան Հայրը, որ բարձր գնահատեց մասնակից երիտասարդներուն բժախնդրութիւնը եւ լրջութիւնը, նման հաւաք մը յաջող կազմակերպելուն եւ համագումարին գործոն մասնակցութիւն բերած ըլլալուն համար: Սրբազանը իր խօսքին մէջ վեր առաւ պատրաստակամութիւն, մասնակցութիւն եւ ծառայութիւն

բառերուն իմաստները, կոչ ուղղելով ներկաներուն՝ երիտասարդաց խմբակներու իրենց մասնակցութիւնը արժեւորելու առաւել մասնակցութեամբ եկեղեցական կեանքին, յիշեցնելով յատկապէս, որ յաջորդող՝ 2009 տարին Վեհափառ Հայրապետը հռչակած է «Հայ Զրիստոնէայ երիտասարդի Տարի», եւ այդ տարին արժանաւորագոյնս նշելու համար՝ մեծ պարտականութիւնը կը վստահուի երիտասարդաց մեր խմբակներուն:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 6-ին, Ազգային Առաջնորդարանի »Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն« մատրան մէջ Ս. Պատարագ մատուցուեցաւ, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր: Հայ Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, տօնն էր Յիսուսի 72 աշակերտներուն: Ս. Պատարագը մատուցանեց Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան: Իր քարոզին մէջ Հայր Սուրբը երիտասարդներուն յիշեցուց, որ իրենք ալ այսօր Յիսուսի աշակերտներ են, Եօթասանասուներկուքին նման իրենք ալ կոչուած են Խաղաղութեան Աւետիսը տարածելու եւ Աստուծոյ Արքայութիւնը յայտարարելու:

Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեցին երիտասարդները:

Պատարագի աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, եւ երիտասարդները խանդավառ մեկնեցան իրենց տուները՝ քաղցր յուշերով:

YOUTH GATHERING AT THE PRELACY

On the afternoon of Saturday, October 4th, members of the Armenian Church Youth Association assembled at the Prelacy “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall for a gathering organized by the Armenian Church Youth Association (ACYA) central board and presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.

The youth had gathered for a presentation by the delegation, led by Very Rev. Fr. Barthev Gulumian, which had participated in the Catholicosate of

Cilicia Youth Conference which took place from August 13-20 in Bikfaya, Lebanon.

The gathering opened with welcoming remarks by Chairman Raffi Naljian, and was followed with remarks by delegation member Liza Sarkis who, on behalf of all the participants, thanked the Prelate for the opportunity to attend the conference, then shared the experiences of the delegation at the conference.



The delegation members then presented a video clip and pictures for the youth to get a better understanding of what took place at the conference, as well as an audio recording of the message of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, geared towards the youth. A question and answer session followed.

Closing remarks were offered by the Prelate in which he commended the event organizers for their efforts in the planning of the gathering, and the delegates for their participation in the conference. He stressed the importance of the active participation of our youth in parish life, reminding them that His Holiness has declared 2009 as “The Year of the Armenian Christian Youth”.

At 6:00 p.m., the youth participated in Divine Liturgy which was celebrated by Very Rev. Fr. Barthev Gulumian in the “St. Dertad and St. Ashkhen” Chapel. Given that it was the Feast of the Seventy-two Disciples of Christ, Fr. Barthev in his sermon addressed the youth saying that they too are the students of Christ and are called upon to spread our faith.

A reception followed the service.